



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2022թ. թիվ 821-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1313-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 16-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի ընթացակարգը Լոռու մարզում ապահովելու նպատակով մինչև 2023թ. մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի համայնքներում իրականացնել ընտրանքային մոնիթորինգ՝ սահմանված կարգով:

2. Լոռու մարզում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉՆԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉՆԱՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 29
ք.Վանաձոր

Կ Ա Ձ Մ

Լոռու մարզում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու
համար ստեղծված աշխատանքային խմբի

- Գ.Ասրյան - աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Աշխատանքային խմբի անդամներ.
- Ա.Թումանյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ
- Ա.Շահվերդյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
- Ս.Խառատյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

29/11/2022

X 

ԿԱՄՈ ԱՃՐԱՖՅԱՆ

Կ. ԱՃՐԱՖՅԱՆ